

**“Հայկական ատոմային էլեկտրակայան” ՓԲԸ-ի ղեկավարության հայտարարագիրը անվտանգության կուլտուրայի բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ**

“ՀԱԷԿ” ՓԲԸ-ի ղեկավարությունը, գիտակցելով իր պատասխանատվությունը ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործման համար, իր առօրյա գործունեության մեջ հատուկ ուշադրություն է դարձնում Անվտանգության կուլտուրայի սկզբունքներին:

Անվտանգության կուլտուրան միջազգային հանրության կողմից սահմանվում է որպես ձեռնարկության գործունեության և առանձին անձանց վարքի բնութագրերի և առանձնահատկությունների համախումբ, որը հաստատում է, որ ԱԷԿ-ի անվտանգության խնդիրներին՝ որպես առավել բարձր առաջնահերթություն ունեցող խնդիրների, հատկացվում է նրանց կարևորությամբ որոշվող ուշադրություն:

Հետևաբար, ՀԱԷԿ-ի շահագործման անվտանգության հարցերը մեզ համար առավել բարձր առաջնահերթություն ունեն:

Մենք փորձում ենք ձեռնարկությունում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են անվտանգության հարցերում անձնական պատասխանատվության և ընդհանուր ինքնակառավարման զգացումի զարգացմանը՝ ապահովելով խոր գիտելիքներ, անվտանգության ապահովման հիմնական չափանիշների և սկզբունքների ըմբռնում ձեռնարկության բոլոր աշխատողների կողմից և միջուկային տեղակայանքների անվտանգ շահագործմանը վերաբերող հարցերի առաջնահերթության և կարևորության գիտակցում նրանց կողմից:

“ՀԱԷԿ” ՓԲԸ-ի ղեկավարությունն իր լիազորությունների և հնարավորությունների շրջանակներում կձգտի բարձրացնել Անվտանգության կուլտուրայի մակարդակը գործունեության բոլոր տեսակների կատարելագործման միջոցով՝ հատուկ ուշադրություն դարձնելով այնպիսի բնութագրերի, ինչպիսիք են.

- անվտանգության կարևորության անձնական գիտակցում,
- անձնակազմի ուսուցման և հրահանգների, ինչպես նաև նրա ինքնուսուցման միջոցով ապահովվող գիտելիքներ և կոմպետենտություն,
- նվիրվածություն, որը պահանջում է ավագ ղեկավարների մակարդակում անվտանգության բարձր առաջնահերթության ապացուցում և առանձին անձանց կողմից անվտանգության ընդհանուր նպատակների ճանաչում,
- մոտիվացիա՝ ղեկավարման, նպատակադրման մեթոդների, խրախուսման և պատժման համակարգի ստեղծման և առանձին անձանց մոտ ներքին դիրքորոշման ձևավորման միջոցով,
- հսկողություն, որը ներառում է ստուգումների և փորձաքննությունների պրակտիկա, և առանձին անձանց քննադատական դիրքորոշմանն արձագանքելու պատրաստականություն,
- պատասխանատվություն՝ աշխատանքային պարտականությունների պաշտոնականացված սահմանման ու նկարագրման և առանձին անձանց կողմից դրանց ըմբռնման միջոցով:

Անվտանգության կուլտուրան և ՀԱԷԿ-ի շահագործման անվտանգությունը բարձր մակարդակի վրա պահելը “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի գործունեության մեջ անվտանգության հիմնական նպատակն է հանդիսանում, և մենք կարծում ենք, որ ձեռնարկության յուրաքանչյուր աշխատող կարող է և պարտավոր է իր անձնական ներդրումն ունենալ մշտական բարելավման և կատարելագործման պրոցեսում:

Ուստի, “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի ղեկավարությունը կոչ է անում ողջ անձնակազմին.

-պահպանել և որակով կատարել “ՀԱԷԿ” ՓԲԸ-ում գործող նորմատիվ, վարչական և շահագործական փաստաթղթերի պահանջները,

-մշտապես դրսևորել պատշաճ վարք, աշխատել անվտանգ և հուսալի կերպով, գիտակցել պատասխանատվությունը սեփական վարքի համար,

-աշխատանքային պարտականությունները կատարել անձնական պատասխանատվության զգացումով, որը բացառում է բարեհոգությունը՝ կիրառելով ինքնավերահսկման սկզբունքը,

-գիտակցել սխալները թաքցնելու անթույլատրելիությունը, դրանց պատճառները պարզելու և վերացնելու անհրաժեշտությունը,

- մշտապես ինքնակատարելագործվել, ուսումնասիրել և կիրառել առաջավոր փորձը, այդ թվում նաև՝ արտասահմանյան:

Ընդունված քաղաքականության հետևողական իրականացումը թույլ կտա բարձրացնել ՀԱԷԿ-ի անվտանգության մակարդակը, անձնակազմի աշխատանքի արդյունավետությունը և բնակչության վստահությունը ատոմային էներգետիկայի նկատմամբ: